

Յայտարարութիւն

Գերմանահայոց կեդրոնական Խորհուրդը մտահոգութեամբ կը հետեւի Հայաստանի մէջ տեղի ունեցող բողոքի ցոյցերուն որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն բազմահազար քաղաքացիներ՝ երիտասարդներու մեծամասնութեամբ:

Գաղտնիք չէ որ երկրի մէջ վաղուց առկայ են ընկերային, տնտեսական, իրաւական և քաղաքական բնոյթի հիմնական խնդիրներ և հսկայական դժգոհութիւններ որոնց դարմանման ձգձգումը պատճառ դարձած է իշխանութիւններու և երկրի նկատմամբ վստահութեան վտանգաւոր խախտման:

Լուրջի պէտք է առնել նման բողոքի երեւոյթներ:

Ցոյցերը ախտանշաններ են աւելի խոր ախտերու. անոնց դարմանը կը կայանայ ճշգրիտ ախտաճանաչման ճամբով շտապ և երկարաշունջ միջոցառումներու որդեգրումով: Այս պարտականութիւնը առաջին հերթին դրուած է Հայաստանի կառաւարութեան ուսերուն:

Քաջածանօթ ենք Հայաստանի դիմագրաւած արտաքին սպառնալիքներուն: Երկրի անվտանգութիւնը անսակարկելի է: Ճիշդ այդ պատճառով պէտք է երկրի ներքին իրավիճակը առողջացնել, կայունացնել և ամրապնդել: Առանց ներքին վիճակի արմատական բարելաւման երկրի անվտանգութիւնը կարելի չէ ապահով նկատել:

Ցոյց կազմակերպելը, բողոքելը և այդ կերպով ճնշում բանեցնելը ժողովրդավարական տարրական իրաւունքներ են, այնքան ատեն որ բռնի ուժի կիրարկումը կը բացառուի: Յարդ ընթացքը խաղաղ է: Բնականաբար երկրի ներքին կեանքը կ'անդամալուծուի, տնտեսութիւնը կը կրէ վնասներ, սակայն այդ բոլորին մէջ մեղաւորները ցուցարարները չեն այլ այդ ցոյցերուն հիմք ծառայող պայմանները: Անհրաժեշտ է շատ արագ դարման ձեռնարկել: Միակ ընդունելի դարմանը կրնայ գոյանալ բոլոր կողմերու միջև սրտբաց երկխօսութեամբ:

Ճիշդ այդ պատճառով կ'ողջունենք Հ.Յ.Դ.ի կոչը՝ ուղղուած ՀՀ Ազգային Ժողովի բոլոր կուսակցութիւններուն անմիջապէս խմբուելու արտախորհրդարանական յատուկ հարթակի մը շուրջ երկիրը ներկայ քաղաքական տագնապէն դուրս բերելու անյետաձգելի հրամայականով: Ան նաև կ'առաջարկէ, որ խորհրդակցութիւններու այս հարթակը գործէ ՀՀ Նախագահ Արմէն Սարգսեանի հովանաւորութեան տակ որպէս գերկուսակցական հեղինակութիւն, որուն պէտք ունի երկիրը այս պահուն: Ուրախ ենք որ Պր. Նախագահը ընդունած է առաջարկը և դիմած համապատասխան քայլերու:

Այս բոլորի կողքին մեր իսկական մարտահրաւերէն մին կը կայանայ պահանջատէր և գիտակից մեր երիտասարդութիւնը ոգեզինելու և Հայրենիքի նկատմամբ իրենց վստահութեան վերականգնման մէջ: Իրաւունք չունինք մսխելու այդ հսկայ հարստութիւնը:

Մինչև երկխօսութեան գործընթացի սկիզբը կոչ կ'ուղղենք ցուցարարներուն և ներքին ապահովութեան ուժերուն ճիգ չխնայել խաղաղ մթնոլորտի ապահովման համար:

Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդ

Տօքթ. Շաւարշ Օվասաթեան

Նախագահ